# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՆԱՆ ՔՈՄՓՆԻ ՍՊԸ-ն ՀՀԱՄԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | կաղամբ մաքրած | շուկա | Կաղամբ մաքրած 55% -վաղահաս, 45%- միջահաս Արտաքին տեսքը` գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առանց հիվանդությունների,լիովին ձևավորված, չճլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով, ձևով, համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասվածք, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն, վաղահաս կաղամբը` տարբեր աստիճանի փխրունությամբ: Գլուխների մաքրման աստիճանը` կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակրեևույթը, ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևներով: Վաղահաս կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ–ից ոչ ավելի, կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս` 0,8 կգ, վաղահաս կաղամբինը` առնվազն 0,8-1.8 կգ, իսկ միջահաս կաղամբինը` առնվազն 2 կգ: Ճաքած և 3սմ–ից ոչ ավելի խորությամբ, մեխանիկական |

| | | | |
|---|---|---|---|
| | | | վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը 5 %–ից ոչ ավելի: 3սմ–ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայութան չի թույլատրվում, չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված “Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի” և “Սննդամթերքի անվտանգության մասին” ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

НАН КОМПНИ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՄԱՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/2 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 4 | | | |